Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի ֆոնդային մասում փոփոխություններ կատարելու մասին

Տրանսպորտային միջոցների երթևեկությունը և հետիոտների տեղաշարժը Մասիս քաղաքում ավելի անվտանգ դարձնելու նպատակով 2020թ. Բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է նախատեսել միջոցներ քաղաքում ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման և գծանշման համար: Ճանապարհային երթևեկության ընդհանուր թվով 23 նշանների ձեռք բերման և տեղադրման աշխատանքների համար անհրաժեշտ է 991300 դրամ, իսկ 1106 քմ գծանշման աշխատանքների համար՝ 984300 դրամ:

Համայնքային սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքների, շենքերի շինությունների հիմնանորոգման, ընդլայնման, կառուցման նպատակներով պատվիրվել են նախագծա-նախահաշվային աշխատանքներ, որոնց համար անհրաժեշտ է փորձագիտական մասնագիտական եզրակացություններ: Նշված եզրակացությունները ձեռք բերելու համար անհրաժեշտ է ֆոնդային բյուջեում նախատեսել համապատասխան դրամական միջոցներ, որի ընդհանուր գումարը կազմում է կապիտալ նախագծա-նախահաշվային աշխատանքների փորձաքննության համար 976360դրամ, ճանապարհների ընթացիկ նորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փորձաքննության համար 12320 դրամ:

Առաջարկվում է 2020 թ. բյուջեի ֆոնդային մասի ընդհանուր բնույթի այլ ծառայությունների վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածը նվազեցնել 2 951 960դրամով և այն ուղղել կապիտալ ծախսերին ըստ նախագծերի համապատասխան ոլորտների նախագծա-նախահաշվային աշխատանքների հոդվածներին և ճանապարհային նշանների տեղադրման, գծանշման աշխատանքներին ըստ հավելված 1-ի:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան